

Գեղարքունիքի մարզպետի պարտականությունները կատարող Նարեկ Մանուկյանի շնորհավորական ուղերձը Երիտասարդների միջազգային օրվա կապակցությամբ

Սիրելի՛ երիտասարդներ  
Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ:

Օգոստոսի 12-ը ՄԱԿ-ը 1999 թ.-ից ի վեր նշում է որպես Երիտասարդության միջազգային օր՝ մեկ անգամ ևս կարևորելու ձեր առանձնահատուկ դերն ու ներուժը պետությունների զարգացման, կայացման և առաջընթացի, հայրենիքի բարօրության գործում:

Ձեր երազանքներով, ձգտումներով ու վճռականությամբ է պայմանավորված մեր երկրի վաղվա օրը, քանզի հենց երիտասարդներին է վերապահված մեր հայրենիքի ու մեր մարզի կայուն զարգացման, հզորացման, ավելի բարեկեցիկ դարձնելու պատասխանատու գործի շարունակականության ապահովումը:

Դուք եք մեր երկրի ապագան կերտողները՝ վաղվա գիտնականները, ստեղծագործ մտավորականները, քաղաքական, պետական գործիչները, բժիշկն ու մանկավարժը:

Մաղթում եմ ձեզ առողջություն, ապրեք, արարեք և շենացրեք մեր հայրենիքը խաղաղ երկնքի ներքո: Ամենայն բարիք և երջանկություն եմ ցանկանում ձեզ:

Լավագույն ցանկություններով՝ Նարեկ Մանուկյան